



ԲՁԱՓ կը յառաջանանք,
նոյնչափ մեր առջեւ կ'ել-
լին Տիւզեան գերդաս-
տանին փառաւորագոյն
զարդերն: Այսպիսի մէկն
է Յովհաննու որդին՝
Միքայէլ Զէլէսի, Հ:-
ճա Մէրայէլ անուանեալն
(ծն. 1724 Յունուար 14).

ամուսնացեալ ընդ Իսկուհի օրիորդի՝ դստեր Սըր-
մաքէշ Պաղտասարայ (յամի 1744, Գեկտ. 16):

Ի բնէ մեծամեծ ձրիւք զարդարուած՝ ման-
կութիւնն անցուց նկարչութեամբ, ոսկերչու-
թեամբ ու քիմիագիտութեան ուսմանց պատաղե-
լով. իւր նկարչութիւնն շատ համբաւաւոր էր:
Սուլթան Մահմուտ զինքն Արտուշի անվերապէս
անուանած ատեն՝ կը զարմանար ձեւակերտու-